



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2014 թվականի N 906 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 1917-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 30-ի N 488 որոշման 5.1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1917-Ն որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.2-րդ կետով.

«2.2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման բաժինը կարող է ունենալ առնվազն 3 հաստիքային միավոր:»:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի՝

1) օրենսդրության վերլուծության և կատարելագործման վարչությունը վերակազմակերպել օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչության.

2) անձնակազմի կառավարման բաժինը վերակազմակերպել անձնակազմի կառավարման վարչության.

3) հաշվապահական հաշվառման բաժինը և ֆինանսական բաժինը միաձուլման ձևով վերակազմակերպել ֆինանսատնտեսագիտական վարչության.

4) միջազգային իրավական հարաբերությունների վարչությունը վերակազմակերպել միջազգային իրավական փոխօգնության և արտաքին կապերի վարչության.

5) տնտեսական բաժինը վերակազմակերպել գործերի կառավարչության.

6) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը վերակազմակերպել տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության.

7) համակարգի իրավական ապահովման վարչությունը վերակազմակերպել կազմակերպական-իրավական վարչության.

8) ստեղծել առաջին բաժին.

9) ստեղծել արխիվային բաժին:

3. Այդ կապակցությամբ որոշման N 2 հավելվածի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «1. Վարչություններ» և «2. Բաժիններ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վարչություններ

Միջազգային իրավական փոխօգնության և արտաքին կապերի վարչություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչություն

Կազմակերպական-իրավական վարչություն

Անձնակազմի կառավարման վարչություն

Ֆինանսատնտեսագիտական վարչություն

Գործերի կառավարչություն

Օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչություն

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

Քարտուղարություն

2. Բաժիններ

Առաջին բաժին

Ներքին աուդիտի բաժին

Արխիվային բաժին:»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

2014 թ. սեպտեմբերի 4  
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ